

**ՄԱՏՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԸ. ՀԱԿՈՒ ԱՆԱՅԱՆ**

«Դոկտ. Անասյանի դիտական գործունեության արգասարեր շրջանը կազմած են, անշուշտ, ավելի քան լորս տասնամյակները (1936—1978), որ ան ապրած է Մայր Հայրենիքին մեջ և ուր ան, իրրե ավագ գիտաշխատող Ակադեմիայի Պատմության ինստիտուտին մեջ և հատկապես Մատենադարանի բազմահազար ձեռագիրներու խորագրին քննարկումներով, հետըհետե լույս ընծայած է փառահնգ շարքը հայագիտական բազմազան նյութեր և հարցեր շոշափող գիրքերու և ուսումնական հոգվածներու, որոնք հրատարակված են թե՛ Սովետական Հայաստանի և թե՛ արտասահմանի մեջ, Դոկտ. Անասյանը արդեն տիրացած էր մեծ հռչակի, որպես մին նոր շրջանի խոշորագույն հայագետներեն, երբ 1978 թ. իր ընտանեկան հանգամանքներու բերումով հաստատվեցավ լոս Անճելոս»<sup>1</sup>:

Սույն ընդարձակ մեջբերումը ես քաղեցի որպես վկայություն այն բանի, որ արտասահմանյան հայագիտությունը նույնպես Հ. Ս. Անասյանի դիտական գործունեությունը գնահատում է որպես սովետահայ նշանավոր հայագետի վաստակի և որ այդ հայագետը մեկ տասնամյակ առաջ լոս Անճելոսում հաստատվել է զուտ ընտանեկան հանգամանքների բերումով, Օտարություն մեջ նույնպես Հ. Անասյանը շարունակում էր մնալ այն համոզմանը, որ իր երազները մարմնավորողը և ողջ կյանքն իմաստավորողը եղել է Մայր Հայրենիքը. «...Մայր Հայրենիքն է, որ իր հարազատ մթնոլորտով և ընձեռած լիառատ հնարավորություններով խթանել է իմ վճռահանությունը՝ իմ նախասիրությունների ուղիով գնալու, ապահովել է իմ վերելքը գիտության աստիճաններով, որպեսզի կարողանայի մարմնավորել իմ երազները և իմաստավորել իմ ողջ կյանքը՝ ինձ և իմ ժողովրդի համար: Ուստի՝ խոր երախտագիտությունը եմ լցված հայրենիքիս նկատմամբ»<sup>2</sup>: Այս երախտագիտությունը նա հայտնել է շորս տարի առաջ, 1984-ին, իր ութսունամյակի օրերին: Այսօր նա լինելու էր ութսունչորս տարեկան, բայց իր մահկանացուն կնքեց շուրջ հազար էջանոց «Մանր երկերի» տպագրության ավարտը չհասցրած: Առնվազն հազար էջ էլ նա կտակել է հետմահու՝ հրատարակիչներին: Այս առիթով չեմ կարող չդիմել գիտնականի հետմահու հրատարակությունների մասին դարձյալ արտասահմանյան հայագետների հայտնած կարծիքին. «Անասյան թերևս բարեբախտ է, որ Հայաստան կը գտնվի, որ յետմահու, իր աշխատությունները կրնան չենթարկվիլ այն դժբախտ ճակատագրին, որուն առարկա եղավ Նորայր Բյուզանդացիի թողոնը, հեռավոր Շվեդի մեջ»<sup>3</sup>: Հեռավոր Շվեդիայում դժբախտ ճակատագրի գո՞ դարձան հայագիտության գոհարներն այն ինքնատիպ գիտնականի, Նորայր Բյուզանդացու, որի անվան հետ միասին Հ. Անասյանի անունը հիշատակելն իսկ նշանակում է շատ բարձր գնահատականի արժանացնել հիշատակվողին: Անշուշտ, պատահաբար չէ, որ վերորենրյալ տողերում ն. Բյուզանդացու և Հ. Անասյանի անունները կողք կողքի են: Երկու հայագետներն էլ ժամանակին գտնվել են Վենետիկի Մխիթարյան միաբանությունում և երկուսն էլ հետագայում, ապավինելով ճակատագրին, գործել են այդ համբավվոր օջախից հեռու: Երկուսն էլ Վենետիկից հետո հանգրվանել են Փարիզում, որից հետո նրանց ճանապարհները բաժանվել են: Բաժանումը մեկին հասցրել է դժբախտության, մյուսին՝ երջանկության: Դժբախտը՝ Նորայր Բյուզանդացին է, որի անտիպ աշխատությունները մինչև օրս էլ մնում են օտարության մեջ, իսկ բախտավորը Հակոբ Անասյանն է, որը թեև հանգչում է հեռավոր Ամերիկայում, սակայն իր զուլխործոցի՝ «Հայկական մատենագիտության», թողոնը ժառանգել է Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանին, այստեղ հրատարակելու համար:

«Հայկական մատենագիտությունը» համաշխարհային շահիանիշներով շահվելու արժանի վաստակ է, ուստի նրա գնահատման խոսքը տանք համաշխարհային հռչակի տեր գիտնականներին: Բելգիացի գիտնական Ժերար Գաբիտը գրում է. «Այս աշխատությունը կատարյալ գանձարան է բոլոր նրանց համար, ովքեր, ինչպես ես, զբաղվում են հին մատենագրությամբ և հայոց

<sup>1</sup> «Հակոբ Սեդրակի Անասյան», հրատարակություն ամերիկահայ միջազգային գուլեճի, լոս Անճելոս, 1984, էջ 5—6 (պրոֆ. Ավետիս Գ. Սանճյանի առաջաբանից): Այսուհետև ՀՍԱ:  
<sup>2</sup> ՀՍԱ, էջ 25 (Երվանդ Գալստյանի աշ. Ս. Անասյանի կյանքն ու գործը հոգվածից):  
<sup>3</sup> Հ. Քյուրտյան, Հակոբ Անասյան (ծննդյան յոթանասնամյակին առթիվ), «Հայրենիք», 28. VII. 1975, «Աղղակ», 18. VII. 1975:

պատմությամբ... վերջերս ևս հրատարակեցի «Գիւտ Լրից մանկանցն ի Բարելոնի» վրացերեն ընդերը, ջուլց տալով, որ այն ծագում է հայկականից»<sup>4</sup>։ Այնուհետև Գարիտը հայտնում է, որ վրացականի հիմքում ընկած է հայկական ճիշտ այնպիսի մի բնագիր, որը նշված է մատենագիտությունում և որը մտադիր է ինքը հրատարակել։ Ե՛րից մանկանց» պատմութեամբ համաշխարհային թեմա է, ուստի ինքնուրույն հասկանալի է Անասյանի նշած ձեռագրերում գտնվող հայկական անտիպ բնագրի առաջացրած հետաքրքրությունը գիտական աշխարհում։

Արևմտագերմանացի արևելագետ Յուլիուս Ասֆալցն ուշագրություն է հրավիրում «Մատենագիտության» բազմակողմանի կիրառման հնարավորության վրա ոչ միայն հայ, այլև օտար գրողությունների (հատկապես՝ բյուզանդական գրականության) ուսումնասիրության բնագավառում։ Ե՛յն տպագիր բնագրերն այս կամ այն չափով ծանոթ են մասնագետներին, ապա ձեռագրերում գտնվող անտիպ նյութերի մասին տեղեկությունները սուղ են, Այս առումով վիճակն ավելի բարձր է ասորական, բրիտանյա-արաբական, վրացական ձեռագրերի վերաբերյալ տեղեկությունների մատուցման բնագավառում. «հայ մատենագրությունը, որը թվարկված գրականություններին իր կարևորությամբ չի զիջում, մինչև այժմ չունի նրանց համապատասխանող մի մատենագիտություն։ Այս բացը գալիս է մասամբ լրացնելու մեծածավալ Հայկական մատենագիտությունը»<sup>5</sup>։

Ռումինացի հայագետ Վլադ Բրնըցևնուն նշում է Ղ. Անասյանի արտակարգ արգասավոր գործունեությունը, որը հնարավոր էր լեզուների իմացության պայմաններում<sup>6</sup>։ «Մատենագիտությունը» բարձր են գնահատել օտար գիտնականներից նաև Կազիմիր Ռոժկոն, Փան-Պիեռ Մահեն և ուրիշները։ Նրանց խոսքը ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, լեհերեն և այլ լեզուներով տպագրված է Անասյանի 80 ամյակին նվիրված վերոհիշյալ «ՀՍԱ» ժողովածուում, որում հրատարակված է շուրջ երեք տասնյակ գիտնականների կարծիքը միայն «Մատենագիտության» մասին։ Փողովածուում բերված է Ղ. Անասյանի գիտական գործունեությանը նվիրված գնահատականները ընդհանուր ցանկը, ուր կազմողի ուշագրությունից, սակայն, վրիպել են Մոսկվայում և այլուր տպված որոշ կարծիքներ<sup>7</sup>։ Լրացման կարոտ է նաև Ղ. Անասյանի աշխատությունների ցանկը, որում գրանցված են 1932—1984 թթ. լույս տեսած 106 աշխատությունները։ Դժբախտաբար, վրիպել են հեղինակի անդրանիկ հոդվածները, որոնք լույս են տեսել Փարիզում, 1929 թ.<sup>8</sup>։

Փոքրիկ հոդվածում հնարավոր չէ թվարկել Անասյանի բոլոր աշխատությունների նույնիսկ վերնագրերը։ Առավել անհնար է անդրադառնալ «Մատենագիտության» մեջ տեղ գտած հոդվածներին, որոնք թեև մտնում են մեկ ընդհանուր հատորի մեջ և ցուցակում նշված չեն, սակայն, իրականում, կրկնապատկելու, եռապատկելու էին ցանկի բովանդակությունը, եթե սպագրվին որպես առանձին ուսումնասիրություններ։ Դրանցից է, օրինակ, աղվանից գրերին վերաբերող հոդվածը, որն ընդունելություն գտավ նաև նախկինում այլ տեսակետներ ունեցած գիտնականների կողմից։ Այսպես, օրինակ, Ա. Շանիձեն Ղ. Անասյանի տեսակետին ծանոթանալուց հետո գրել է. «Լիովին հնարավոր է, որ աղվանական տառերը դարերի ընթացքում կորել են այնպիսի փոփոխություններ, որ այլևս նման չեն իրենց նախատիպերին, ինչպես այդ տեղի է ունեցել վրաց գրերի զարգացման պատմության մեջ»<sup>9</sup>։

Մատենագիտական աշխատություններին, հանրագիտարաններին, բառարաններին, համաբարրաններին և այդ կարգի մյուս գործերին սպառիչ լինելու պահանջ ներկայացնելը կնշանակեր տեղյակ չլինել այդ գործերի բարդություններին։ Մանավանդ «Մատենագիտության» հիմնադիր հատորի համար նյութեր հավաքելու տարիներին արտասահմանում հրատարակված գիտական գրականության մուտքը Հայաստան նույնքան հնարավոր չէր, որքան մեր օրերում, երբ Գյուլպենկյան հաստատությունը պարբերաբար հայթայթում և ՀՍՍՀ գիտությունների ակադե-

<sup>4</sup> ՀՍԱ, էջ 52—53։

<sup>5</sup> J. Assfalg, A. S. Anastan, Armjanskaja bibliologia V—XVIII v. v. „Byzantinische Zeitschrift, München, 1960, S. 133—134.

<sup>6</sup> „Studia et acta Orientalia“, t. III, Bucarest, 1961, p. 229—230.

<sup>7</sup> Ի ղեպ՝ տողերիս հեղինակի երեք գրախոսականների ցուցակից բացակայում է հետևյալը. А. С. Анасян, Армянская библиография (V—XVIII вв.) («Вопросы истории», М., 1962, № 10, с. 144—145).

<sup>8</sup> Տե՛ս Գ Լ Կ ր Գ Ա ր Գ ր յ ան, Մանրակրկիտ որոնումներից մինչև կոթողային հատորներ («Սովետական գրականություն», 1974, № 11, էջ 146)։

<sup>9</sup> А. Г. Шанидзе, Криптографическая запись в одной армянской рукописи из Мюнхенской библиотеки (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 9, էջ 91—98).

միային, Մատենադարանին և այլ հիմնարկների ապահովում է բաղմալեղու դրականությամբ: Եվ, այդուհանդերձ, Հ. Անասյանին հաղորդվեց դժվարին պայմաններում հիմք դնել մատենագիտական այնպիսի մի կոթողի, որը գլուխ բերելու համար անհրաժեշտ էր օժտված լինել անասյանական խառնվածքով և իրազեկությամբ: Մատենագիտության առաջին երեք հատորները (3-րդ հատորը դրեթե պատրաստ է հրատարակության) հայ մատենագիտության հաղթանակը նշանավորող գլուխգործոցներ են, որոնցում անթեղված են հայագիտության զարգացմանը խթանող անհամար ազդակներ: Գծրախտարար, հայ ականավոր մատենագետը հնարավորություն չունեցավ ավարտելու իր հիմնադրած շենքի կառուցումը: Մատենադարանին կտակված անտիպ թողոնը (Մատենագիտության 4-րդ և հաջորդ հատորները) դեռևս կարոտ է նյութերի լրացման և նախորդ հատորների դասականությանը հասցնելու ուղղությամբ կատարվելիք այնպիսի աշխատանքների, որոնք կատարելու համար հարկավոր է լինել Անասյան: Իսկ Անասյանն այլևս չկա...

2. Անասյանի պատմագիտական աշխատությունների գլուխգործոցը հանդիսանում է 1961-ին ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության լույս տեսած «Ժէ գարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» մենագրությունը: Այստեղ հանրագումարի են բերված գիտական շուրջ երեսնամյա պրպտումները: Արևմտահայ ազատագրական շարժման նոր էջերը հեղինակը հայտնաբերել է ուսումնասիրելով ոչ միայն հայկական, այլև օտար աղբյուրներ, դիվանագիտական վավերագրեր, նշանավոր գործիչների գրագրություններ, ուղեգրություններ, կենսագրություններ և այլն:

1969-ին վենետիկում հրատարակվեց «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ» մենագրությունը, որը նախօրոք տպագրվել էր «Բազմավեպի» 1968 թ. № 7—12-ում: Այստեղ մատենագետ և պատմաբան Անասյանը գրսևորում է նաև դավանարանի իր վարպետությունը և Վարդան Այգեկցուն բարձրացնում է հայ միջնադարյան դավանաբանական մտածողության ամենաբարձր պատվանդաններից մեկի վրա: Ն. Մառից հետո, թվում է, թե Այգեկցու մեծությանն ավելացնելու բան չէր մնում, սակայն Հ. Անասյանի հայտնաբերած նոր երկերից հատկապես «Գիրք հաստատության և արմատ հաւատոյ» երկը գալիս է կրկնապատկելու այդ մեծությունը:

Հունարենից հայերեն թարգմանված Հին և Նոր կտակարանները գիտական աշխարհում համարվում են զանազան լեզուներով կատարված թարգմանություններից լավագույնները: Հայ թարգմանական գրականության այդ գլուխգործոցների ուսումնասիրությանը նվիրված «Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը» աշխատությունը Հ. Անասյանը մասնագիտական աշխարհին ներկայանում է որպես այդ բնագավառի լավագույն հետազոտողներից մեկը:

Աղբյուրագետների և բնագրագետների համար որպես անփոխարինելի ձեռնարկ կարող է ծառայել «Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը» բնագրաքննական ուսումնասիրությունը, որում հետազոտության առարկա են դարձել հայ համաբարբառային գրականության ակունքները, նրանց կապը օտար գրականությունների հետ: Ուրվագծված են այդ բնագավառի հետագա զարգացման ուղիները, բացահայտված է հայերենի գրականության նշանակությունը համաշխարհային գրականության ասպարեզում:

Գեռևս 1953-ին «Վիզանտիստիկ վրեժներին» 7-րդ հատորում լույս տեսան Բյուզանդիայի անկմանը վերաբերող հայկական նյութեր, որոնք պատրաստվել էին Հ. Անասյանի շանքերով: Դրանք ամբողջացան և լույս աշխարհ եկան «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին» մենագրությունում, որը տպագրվեց 1957-ին, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությամբ: «Այս աշխատությունն ինքնին պատմաբանասիրական ուսումնասիրություն է և կոչված է նաև բավարարելու օրվա ակտուալ քաղաքական պահանջներին: Գաղտնիք չէ, օրինակ, որ ժամանակակից կառավարող շրջանները... համարձակություն են ունենում լկտի կերպով արտահայտվելու, որ իբր թե Կ. Պոլսի գրավումից ի վեր Օտտոմանյան կայսրության մեջ և ապա ժամանակակից Թուրքիայում սլավոն և այլ ժողովուրդները ավելի ազատ են եղել, քան երբևէ: Ընկ. Անասյանի այս աշխատությունը կոչված է այդ հարցին բացասական պատասխան տալու» (Վ. Հակոբյան)<sup>10</sup>:

2. Անասյանի հայտնաբերած և հրատարակած սկզբնաղբյուրներից է նաև լեհահայ ժամանակագիր Հովհաննես Կամենացու «Պատմություն պատերազմին խոթինու» խորագիրը կրող ժամանակագրությունը, որը տպագրվեց առաջին անգամ ռուսերեն թարգմանությամբ («Պատմաբանասիրական հանդես», 1958, № 2, էջ 258—286) և ապա՝ առանձին գրքով՝ Լեհաստանի և լեհահայերի, ինչպես նաև զապորոժյան կազակների պատմության ուսումնասիրության համար կարևոր այս աղբյուրում պահպանվել են նոր նյութեր՝ 1621 թ. լեհ-թուրքական պատերազմի:

10 ՀՍՍՀ, էջ 90:

մասին 2. Անասյանի աշխատությունը, Կ. Յուզբաշյանի ուսերեն թարգմանությամբ, գրավել է լեհ գիտնականների ուշադրությունը և գրախոսվել Վարչավայի արևելագիտական հանդեսում<sup>11</sup>։ Թվարկենք 2. Անասյանի ևս մի քանի աշխատությունների միայն համառոտ վերնագրերը. «Խորհնացու ժամանակագրական համակարգի հարցը», «Նոր հայացք ազվանագիտության բնագավառում», «Ներսես Շնորհալին և Արմատ հաւատոյ ժողովածուն», «Վենետիկյան Մխիթարյանների թարգմանական գործունեությունը», «ԺԸ դարում գրված հայատառ թուրքերեն լորս բըժըշկարաններ», «Դեպի Արցախ-Խաչենի պատմության խորքերը», «Քուրթական ֆուլթուվաթը և հայերը», «Մահմեդականությունը և քրիստոնյա հարկատուները», «Սայաթ-Նովայի ադրբեջաներեն նորահայտ մի տաղը», «Միջալի էմինեհուլի ստեղծագործության սոցիալական արժեքը և նրա կապերը հայ գրականության հետ» և այլն։ Այս ամենը խոսում է հայագետի հետաքրքրությունների բազմազանության և մասնագիտական խոր պատրաստության մասին։

Հետպատերազմյան տարիներին հրապարակված մի շարք գրքերի (Եղիշե, Փավստոս Բուղանգ, Արիստակես Լաստիվերտցի, Մխիթար Կոռ, Կիրակոս Գանձակեցի, Կոստանդին Երզնկացի, Սայաթ-Նովա) մատենագիտական ցանկերը կազմել է 2. Անասյանը։ Համաշխարհային հասարակայնությանը Մեծ եղեռնի ծանոթացնելու նպատակով նա 1983 թ. Լոս Անջելեսում կազմեց և հրատարակեց ցեղասպանությանը վերաբերող նյութերի համառոտ մատենագիտությունը ուսերեն և անգլերեն լեզուներով («Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը Քուրթիսյում»)։

Բազմավաստակ գիտնականի գրչի արգասիքներից են նաև Քովմաս Ազուլեցուն, Գրիգոր Շղթայակրին, Գեորգես Ֆրանցեսին, Արսեն Երուսաղեմացուն, Ստեփանոս Սալմաստեցուն, Բաղդասար Կարնեցուն, Դավիթ Կիպրացուն, Կոստանդին Դրագասին, Անդրանիկ Զորավարին և այլոց նվիրված արժեքավոր երկերը։ 2. Անասյանի աշխատությունների մեջ հնարավոր չէ գտնել թեկուզև շատ փոքրածավալ որևէ գործ, որն արդյունք չլիներ երկար ու մանրակրկիտ որոնումների։ Այս տեսակետից օրինակ կարող է հանդիսանալ Ա. Սալմասյանի «Հայկական մատենագիտություն» (Երևան, 1969) աշխատությանը նվիրված գրախոսականը, որը փաստորեն գրախոսվող դիրքը լրացնող մի ձեռնարկ է։ Փավստոս Բուզանդի ուսերեն թարգմանությանը նվիրված ծավալուն գործը նույնպես այդ թարգմանությունը լրացնող ու ճշգրտող աշխատություն է։

Բազմաշնորհ գիտնականն իր հետազոտությունները վարում էր, հանդես գալով միաժամանակ և՛ որպես մատենագետ ու պատմաբան, և՛ որպես բանասեր, աղբյուրագետ, բնագրագետ, ձեռագրագետ, որը քննել է Մաշտոցի անվան Մատենադարանի հարյուրավոր ձեռագրեր։ Հայկական աղբյուրներից բացի նա օգտագործում էր նաև հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն, ռումիներեն, թուրքերեն, ուսերեն և այլ լեզուներով ստեղծված աղբյուրներ։ 2. Անասյանը միշտապես համրավ ուներ և գրագրություններ էր վարում աշխարհի տարբեր երկրներում ապրող գիտնականների (Ժերար Գարիտ, էռնեստ Բիհայն, Շարլ Մերսիյե, Լուի Լրյուար, Բեռնար Ուտիե, Վիգեն Միսթրիհ, Յուլիուս Ասֆալզ, էդուարդ Տրըյարսկի, Ջոն Գրեպին) հետ։ Հանգուցյալ հայագետին նվիրված մեր խոսքն ավարտենք հույս հայտնելով, որ Մայր Հայրենիքին կտակված նրա անտիպ թողունք պատշաճ խնամքով լույս աշխարհ կգա և՛ տպագիր վաստակին միացած, սերունդներին կհասցնի հայագիտության անխոնջ ու օրինակելի երախտավորի անունը։

Գ. Վ. ԱՐԳԱՐՅԱՆ

Բաճասիրակաճ գիտությունների դպրատուն

<sup>11</sup> E. O. Tryjarski, „Historii wojny Chocimskiej“ autorach armianskich „Kronik Kamenieckich“ (Przegląd orientalistyczny“, Warszawa, 1959, 2(306), p. 211—214).